

---

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ-Ի 1087.1 ՀՈԴՎԱԾԻ  
ԱՌԵՂԾՎԱԾԸ**

**ԱՐՄԵՆՈՒՅԻ ՉԻՖԼԻԿՅԱՆ**

2010 թվականի մայիսի 18-ին կատարված օրենսդրական փոփոխություններով կյանքի կոչվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը՝ «Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» խորագրով: Այն նշանավորվեց ոչ միայն զրպարտության և վիրավորանքի՝ այդուհետ քաղաքացիաիրավական կարգավորմանն անցնելով, այլև մի շարք դրույթներով, որոնք աչքի ընկան ՀՀ քաղաքացիական օրենսգրքին ոչ բնորոշ ձևակերպումներով: Դրանք առավելապես վերաբերում են «զրպարտություն» իրավախախտման կարգավորումներին: Ուստի տվյալ ուսումնասիրությունը նպատակահարմար ենք գտնում սկսել զրպարտության հասկացության պարզաբանումից:

Այսպես, անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման հետևանքով պատասխանատվության հանգեցնող արարքներից մեկը, այն է՝ զրպարտությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվում է որպես անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալների (statement of fact) հրապարակային ներկայացում, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Մեկնաբանելով այս դրույթը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ LԴ/0749/02/10 քաղաքացիական գործով 2012 թվականի ապրիլի 27-ին կայացրած որոշմամբ արձանագրեց արարքի՝ զրպարտություն գնահատելու չափանիշները: Այսպես, դատարանը նշեց, որ զրպարտություն համարվելու համար արարքը պետք է բավարարի հետևյալ հատկանիշներին

1. անձի վերաբերյալ պետք է լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածը պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Սակայն, միննույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է որոշակի վերապահումներ, երբ արարքը բավարարում է վերոնշյալ բոլոր չափանիշները, բայց նայնպես, գրպարտություն չի համարվում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում գրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում,

2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները,

3) այն բխում է գրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

Ընդ որում՝ վերոգրյալ վերապահումների ցանկը սպառնիչ է, այսինքն, բացի հոդվածում թվարկվածներից, այլ դեպքեր, երբ արարքը համապատասխանի գրպարտության բոլոր չափանիշներին, բայց չհամարվի այդպիսին, լինել չեն կարող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասով նախատեսվում են որոշակի բացառություններ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ առանձին-առանձին:

Այսպես, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում գրպարտություն, եթե դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում:

Այս առնչությամբ Ս. Պոտապենկոն նշում է, որ ցանկացած դեպքում անթույլատրելի պետք է լինի այն ապացույցների, այդ թվում՝ վկաների ցուցմունքների վիճարկումը պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության առանձին հայց ներկայացնելու միջոցով, որոնք այլ գործով եղել են դատական քննության առարկա:

Դա ըստ էության կնշանակի դատարանի կողմից նույն ապացույցի կրկնակի գնահատում<sup>1</sup>:

Իսկ Ս. Կամենևան նշում է, որ իրավիճակը փոխվում է, երբ գործի քննության ժամանակ տեղեկություններ են հաղորդվում գործին մասնակից չդարձված երրորդ անձի մասին այն դեպքում, եթե կայացված դատական ակտը նրա համար իրավունքներ և պարտականություններ չի սահմանում<sup>2</sup>, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360 հոդվածի համաձայն՝ նման անձինք վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունեն: Այս պարագայում տվյալ անձինք պետք է իրենց պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության իրավունք ունենան դրա մասին առանձին հայց ներկայացնելու միջոցով:

Ուստի, քանի որ 1087.1 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում սահմանվում է ընդհանրական կանոն փաստացի տվյալների ներկայացման՝ զրպարտություն չհամարվելու առումով, գտնում ենք, որ ճիշտ չի լինի այն բացարձակացնել և տարածել նաև այն դեպքի վրա, երբ արատավորող բնույթի և իրականությանը չհամապատասխանող տվյալներ են հայտնվում երրորդ անձի մասին:

Այս առնչությամբ հետաքրքրական է մոտեցումն անգլոամերիկյան իրավունքում, որտեղ դիֆամացիայի համար պատասխանատվությունից բացառման դեպքերն անվանվում են «բացարձակ անձեռնմխելիություն»: Ամերիկյան իրավունքում դրանից օգտվում են ինչպես դատական, այնպես էլ օրենսդիր և գործադիր մարմիններում քննարկումների, ելույթների, բանավեճերի ժամանակ<sup>3</sup>: Իսկ Անգլիայում գործող «Դիֆամացիայի ակտ»-ի համաձայն՝ բացարձակ անձեռնմխելիությունը տարածվում է պառլամենտում և դատական մարմիններում քննարկումների վրա՝ ըստ նշված ակտի 13-րդ և 14-րդ կետերի<sup>4</sup>: Դրա նպատակն այն է, որ որոշակի կատեգորիայի անձինք առանց պատասխանատվության ենթարկվելու վախի ի վիճակի լինեն ազատորեն մասնակցելու իրենց լիազորությունների իրականացման վերաբերյալ տարատեսակ քննարկումների<sup>5</sup>:

Հաջորդ վերապահումը վերաբերում է այն դեպքին, երբ արատավորող փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը տվյալ ի-

<sup>1</sup> Տե՛ս **Потапенко С. В.** Диффамация и российская судебная практика в контексте опыта Европейского суда по правам человека // <http://archive.is/xDUZP#selection-319.47-319.48> (հղումը՝ 15.11.2020թ.):

<sup>2</sup> Տե՛ս **Каменева З. В.** Диффамация и ее признаки // <http://lexandbusiness.ru/view-article.php?id=3297> (հղումը՝ 15.11.2020):

<sup>3</sup> Տե՛ս **Jasper M. C.**, The Law of Libel and Slander, Oceana publications, Inc., Dobbs Ferry, New York., 1996, էջ 30-33:

<sup>4</sup> Տե՛ս [http://www.legislation.gov.uk/ukpga/1996/31/pdfs/ukpga\\_19960031\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/1996/31/pdfs/ukpga_19960031_en.pdf) (հղումը՝ 15.11.2020թ.):

<sup>5</sup> Տե՛ս **D. Milo**, Defamation and Freedom of Speech, Oxford University Press, New York, 2008, էջ 69:

րավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված ու բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները: Ինչպես նշում է Գ. Բեքմեզյանը, նշված ձևակերպումից բխում է, որ գրպարտության համար մեղադրվող սուբյեկտը կազատվի գրպարտության համար պատասխանատվությունից, և նրա կողմից հրապարակված փաստերը գրպարտություն չեն համարվի, եթե վերջինս ցանկացել է ճշտել իր ունեցած փաստացի տվյալները, սակայն չի կարողացել և, համոզված լինելով այն բանում, որ իր ունեցած տեղեկությունները համապատասխանում են իրականությանը հրապարակել է դրանք: Եվ անձի նպատակը պետք է լինի ոչ թե ինչ-որ մեկին գրպարտելը, այլ իր ունեցած փաստացի տվյալները երրորդ անձանց հասանելի դարձնելը<sup>6</sup>:

Քննարկվող իրավանորմի իր մեկնաբանությունն է արել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 15-ին կայացրած ՄԴՈ-997 թվակիր որոշմամբ, որտեղ ամրագրել է իր իրավական դիրքորոշումը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյոք հասարակության տեղեկացված լինելու շահը գերակա է եղել տեղեկություն հայտնաբերելու անձի վրա դրված պարտականության ու պատասխանատվության համեմատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որի էությունը այն է, որ մամուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» (watchdog) իր գործառնությունը և տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ:

Ինչպես կարելի է նկատել, ուսումնասիրության առարկա հողվածի հիշյալ մասի տվյալ կետի ձևակերպումն այքի է բնկնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին խորթ շարադրանքով: Եվ պետք է նշել, որ մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ այն փոխառված է անգլոամերիկյան իրավունքի դիֆամացիայի վերաբերյալ կարգավորումներից, որն էլ անհրաժեշտ է դարձնում հարցի ուսումնասիրությունը կատարել անգլոամերիկյան իրավունքի տեսանկյունից:

Այսպես, 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում կիրառված են հետևյալ արտահայտությունները՝ «տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ գերակա հանրային շահ», «ողջամտության սահմաններ

---

<sup>6</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք». մաս երրորդ, 4-րդ հրատարակություն (խմբ.՝ Բարսեղյան Ս. Ա., Ղարախանյան Գ. Հ.), ԵՊՀ, Եր., 2011, էջ 63 (համապատասխան ենթագլխի հեղինակը Գ. Բեքմեզյանն է):

րում ձեռնարկել է միջոցներ», «հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել»:

Այս առնչությամբ հարց է ծագում՝ իսկ ի՞նչ է «զերակա հանրային շահ» ասվածը հենց այս հոդվածի համատեքստում, և հարցերի ո՞ր շրջանակն է, որ կարող է համարվել «հասարակական հետաքրքրություն ունեցող»: Թերևս խոսքն այն տեղեկությունների մասին է, որոնք տվյալ հասարակության համար չափազանց կարևոր են: Ուստի կարելի է ենթադրել, որ հանրային շահի բովանդակության մեջ կարող են ընդգրկվել բազմապիսի հարցեր, և նույնիսկ հասարակության հետաքրքրությունը անձի մասնավոր կյանքի որևէ դրվագի վերաբերյալ կարող է բավարար լինել «հանրային շահ» համարվելու համար<sup>7</sup>: Սակայն այն չի կարող չափազանց տարածականորեն մեկնաբանվել. օրինակ՝ պետական պաշտոն զբաղեցնող անձի անձնական կյանքի դրվագը կարող է համարվել հասարակական հետաքրքրության առարկա միայն այն դեպքում, երբ առնչվում է նրա հասարակական գործունեությանը և տվյալ պաշտոնին նրա համապատասխանությանը<sup>8</sup>:

Ուշագրավ է, որ վերոնշյալ գաղափարները, որոնք արտահայտվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում<sup>9</sup>, արտացոլվել են նաև ՀՀ դատական պրակտիկայում: Այսպես, թիվ ԵԿԴ/0526/02/11 գործով<sup>10</sup> դատարանն իր վճռով սահմանեց, որ եթե քաղաքական գործչի անձնական կյանքի տվյալ դրվագի մասին տեղեկանալու մեջ հասարակությունն ունի օրինական շահ, ապա այդպիսի հրապարակումը թույլատրելի է:

Միևնույն ժամանակ, եթե խնդրո առարկա հարցն ունի ընդհանուր հասարակական հետաքրքրություն, ապա այն հանգամանքը, որ մասնավոր անձն իր կամքից անկախ է ընդգրկվում այդպիսի հարաբերության մեջ, չի գրկում այն հասարակական հետաքրքրությունից: Այսինքն՝ նույնիսկ եթե անձը հանրային ճանաչում չունի, նրա վրա կտարածվեն հանրային անձանց դիֆամացիայի վերաբերյալ կանոններն այն դեպքում, երբ իր մասնակցությամբ տվյալ հարաբերությունն ունի հասարակական կարևորություն<sup>11</sup>:

<sup>7</sup> Տե՛ս **Barendt E.**, *Freedom of Speech*, 2nd edition, Oxford University Press, N.Y., 2005, էջ 209:

<sup>8</sup> Տե՛ս **Weaver R. L., Kenyon A. T., Partlett D. F., Walker C. P.**, *The Right to Speak III. Defamation, Reputation and Free Speech*, Carolina Academic Press, Durham, North Carolina, 2006, էջ 55:

<sup>9</sup> Տե՛ս «Կորենտերն ու «Ստանդարտ ֆեդլազսն» ընդդեմ Ավստրիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը,

<sup>10</sup> Տե՛ս «Տիգրան Արզաբանցյանն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՄՊԸ»-ի գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստանի դատարանի 2011 թվականի հունիսի 26-ի վճիռը:

<sup>11</sup> Տե՛ս **Margaret C. Jasper**, նշվ. աշխ., էջ 6:

Մասնավոր և հանրային անձանց նկատմամբ այսպիսի տարբերակված մոտեցման երկու հիմնական պատճառ կա: Առաջինն է, որ հանրային անձինք և հատկապես հանրային ծառայողները մասնավոր անձանց համեմատ հիմնականում դիֆամացիայից պաշտպանվելու ավելի մեծ հնարավորություններ ունեն: Իսկ մյուս պատճառն այն է, որ հանրային անձինք մեծամասամբ իրենց կամքով են ներգրավվում հանրային կյանքի մեջ, ուստի պետք է պատրաստ լինեն գտնվելու հասարակության առավել մեծ ուշադրության ներքո<sup>12</sup>:

«Պեղերսենն ու Բադսգարդն ընդդեմ Դանիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը առանձնացրեց քաղաքական գործիչներին և պետական ծառայողներին՝ սահմանելով, որ պետական ծառայողներին իրենց լիազորությունների իրականացման ժամանակ թույլատրելի քննադատության շրջանակները որոշակի հանգամանքների առկայության դեպքում կարող են ավելի լայն լինել, քան մասնավոր անձանց: Սակայն դիֆամացիայի վերաբերյալ գործեր քննելիս դատարանները պետք է հստակորեն տարանջատեն պետական ծառայողներին և ընտրովի քաղաքական գործիչներին, քանի որ առաջինները իրենց յուրաքանչյուր գործողություն կամ խոսք գիտակցաբար չեն ենթարկում մանրագնին ուսումնասիրության, ինչպես քաղաքական գործիչները, և հետևաբար վերջիններս չպետք է դիտարկվեն պետական ծառայողների հետ միևնույն դիրքից այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է նրանց գործունեության քննադատությանը: Ավելին, նրանք պետք է օգտվեն հասարակության վստահությունից իրենց պաշտոնական պարտականությունները բարեհաջող իրականացնելու համար<sup>13</sup>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում խոսվում նաև քաղաքացիաիրավական սուբյեկտի կողմից փաստացի տվյալների ճշմարտությունը և հիմնավորվածությունը պարզելու համար *ողջամտության սահմաններում ձեռնարկված միջոցների* մասին: Կարծում ենք՝ այստեղ խոսքն անգլիական իրավունքին հայտնի «*ողջամիտ հրապարակման*» մասին է: Պարզաբանենք դրա էությունը. պաշտպանության այս միջոցը թույլ է տալիս իր տարածած տեղեկությունների ճշմարտացիությանը անվստահ հրապարակողին հրապարակել դրանք, եթե նա կարողանա ապացուցել, որ դա ողջամիտ էր:

«Ողջամիտ հրապարակման» հիմքը դրվեց Լորդերի պալատի կողմից քննած «Ռեյնոլդսն ընդդեմ «Թայմս Նյուսփեյփերս»-ի և այլոց» գործով: Դրանով լորդ Նիչոլսն ուրվագծեց դրա կիրառման անհրաժեշտ

<sup>12</sup> Տե՛ս **Weaver R.L., A.T. Kenyon A.T., D.F. Partlett D.F., Walker C.P.**, նշվ. աշխ., էջ 51:

<sup>13</sup> Տե՛ս «Պեղերսենն ու Բադսգարդն ընդդեմ Դանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, <http://docs.pravo.ru/document/view/19382454/17527613/> (15.11.2020 թ. դրությամբ):

պայմանները, որոնք հայտնի են «Նիշուսի չափանիշներ» անվամբ: Այսպիսով, հրապարակումը ողջամիտ գնահատելու համար պետք է հաշվի առնվեն հետևյալ գործոնները՝ հայցվորին վերագրվող արարքների լրջությունը, ներկայացված տեղեկատվության բնույթը (այսինքն՝ արդյոք ք այն հանրային հոգաձույթան առարկա է), արդյոք ք հավաստի է եղել ինֆորմացիայի աղբյուրը, ինչ քայլեր են ձեռնարկվել ինֆորմացիան ստուգելու համար, տեղեկության հրատապությունը. արդյոք ք հայցվորին տրվել է հրապարակված տեղեկատվությունը մեկնաբանելու հնարավորություն, ինչպիսի՞ն է հրապարակման հնչերանգը, որո՞նք են հրապարակման հանգամանքները<sup>14</sup>:

«Ողջամիտ հրապարակում» պաշտպանության միջոցը երկու առանցքային տարր է ներառում: Առաջինը հրապարակման առարկան է, իսկ երկրորդը՝ հրապարակողի հետազոտության որակը: Վերջինը գլխավորապես լրագրողի՝ մեղքի անզգույշ ձև դրսևորելու հանգամանքը պարզելն է, իսկ առաջինը՝ բացահայտման ենթակա երկու հանգամանքների միասնությունը, որի շրջանակներում պետք է պարզվեն հրապարակված արատավորող տեղեկության լրջությունը և հանրային շահի առկայությունը: Այսինքն՝ դրա հիմնական նպատակն այն է, որ հանրային նշանակության հարցեր լուսաբանելիս լրագրողներին տրվի հարաբերական ազատություն, այլ կերպ ասած՝ սխալվելու հնարավորություն:

Պաշտպանության այս միջոցն ունի կարևոր դրական կողմ. դրա շնորհիվ մեղմվում է խոսքի ազատության անցանկալի սահմանափակումը: Բայց, միևնույն ժամանակ, գործնականում դա կիրառելը կապված է որոշ բարդությունների հետ: Այն, թե արդյոք պատասխանողը կազատվի պատասխանատվությունից, հիմնականում կախված է դատարանի կողմից հրապարակումը ողջամիտ գնահատելու հանգամանքից: Իսկ հրապարակումը «ողջամիտ» համարելու համար գնահատման ենթակա հանգամանքները փաստորեն բավական խիստ են: Ինչպես նշել է Դ. Միլոն, անգլիական դատական պրակտիկան վկայում է, որ գործերի մեծ մասի պատասխանողներին չի հաջողվել ապացուցել, որ իրենց հրապարակումը ողջամիտ է: Դատարանները միայն բացառիկ դեպքերում են «ողջամիտ հրապարակման» հիմքով պատասխանողին ազատել պատասխանատվությունից<sup>15</sup>:

Հետաքրքրական է, որ Ավստրալիայում պաշտպանության այս միջոցը գործնականում գրեթե չի կիրառվում, քանի որ դրա կիրառման սահմաններն էլ ավելի նեղ են, քան անգլիական իրավունքում. այսպես, դրա համար անհրաժեշտ է, որ հրապարակված փաստացի տվյալներն ակնհայտորեն վերաբերեն քաղաքական ելույթի:

Կարևոր է նշել, որ անգլիական իրավունքում «ողջամիտ հրապարակում»

<sup>14</sup> Տե՛ս **Milo D.**, նշվ. աշխ., էջ 189:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 187:

րակման» կառուցակարգը պաշտպանության միջոց է զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող անձանց համար, իսկ քաղաքացիների դեպքում գործում է մեկ այլ միջոց՝ «Բարեխիղճ (ազնիվ) մեկնաբանության» կառուցակարգը: Դրա էությունն այն է, որ քաղաքացին պետք է ազատվի պատասխանատվությունից, եթե ազնվորեն արտահայտել է իր տեսակետը հանրային նշանակության հարցի վերաբերյալ, որքան էլ չափազանցված կամ կողմնակալ լինի այն<sup>16</sup>:

Ինչ վերաբերում է փաստացի տվյալները բարեխիղճ և հավասարակշռված ներկայացնելուն, կարծում ենք, որ ճիշտ կլինի այն մեկնաբանել հետևյալ կերպ. անձը չի ունեցել դիմացինին անվանարկելու դիտավորություն, իսկ տեղեկությունները ներկայացրել է առանց աղավաղումների, հնարավորինս ճշգրիտ:

Բացի այդ, անգլոամերիկյան իրավունքի ազդեցությունից զերծ չի մնացել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Այս առումով նկատենք, որ տվյալ կարգավորումը նախատեսվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում այն ժամանակ (2010 թվականին), երբ դեռ չէր ընդունվել գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (2018 թվական), որով և նախատեսվեց ապացուցման բեռի փոխանցման հնարավորությունը: Հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի քննարկվող կարգավորումը բնույթով բացառիկ էր:

Պետք է նշել, որ իրականում դիֆամացիայի վերաբերյալ գործերով ապացուցման պարտականության փոխանցումը բնորոշ է ամերիկյան իրավունքին, համաձայն որի՝ իրականությանը համապատասխանությունն ապացուցելու բեռն անցնում է հայցվորին տուժողի հանրային սուբյեկտ լինելու հիմքով: Միննույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ հանրային անձանց նկատմամբ այսպիսի տարբերակված մոտեցումը որոշ հեղինակներ դրական չեն գնահատում: Մասնավորապես, Ե. Բարենդտը գտնում է, որ հանրային անձանց վրա պատասխանողի ակնհայտ չարամտությունն ապացուցելու պահանջ դնելն արդարացված համարվել չի կարող, քանի որ այդ դեպքում պատասխանողը կարող է հեշտությամբ խույս տալ դիֆամացիայի համար պատասխանատվությունից, նույնիսկ եթե իրապես բարեխիղճ է եղել իր կողմից հրապարակվող տվյալների՝ ճշմարտությանը համապատասխան լինելը ստու-

---

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 58:

գելու հարցում<sup>17</sup>: Ապացուցման բեռի փոխանցում հայտնի է նաև անգլիական իրավունքին, ըստ որի՝ նշված գործերով փոխանցումը կատարվում է պատասխանողի՝ հերքում իրականացնելու պատրաստակամությունը տուժողի կողմից չընդունվելու դեպքում:

*Ինչպես կարելի է նկատել, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում ըստ էության կատարել է մի կողմից՝ ամերիկյան, մյուս կողմից՝ անգլիական իրավունքների կարգավորումների միախառնման փորձ՝ փոխառելով դրանց բնորոշ կարգավորումները և ենթարկելով դրանք որոշակի փոխակերպման:*

Ինչ վերաբերում է 1087.1 հոդվածի 5-րդ մասի երրորդ կետին, ապա դրա համաձայն՝ համապատասխան փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ դրանցից բխող փաստաթղթից: Այս կապակցությամբ թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ տեղեկատվության տարածումը այս դեպքում էլ ենթադրում է հրապարակային ելույթում կամ պատասխանում կամ փաստաթղթում տեղ գտած եզրահանգումների կամ փաստերի բարեխիղճ շարադրանք: Ելույթ պետք է դիտարկել անձի հնչեցրած բանավոր խոսքը, որը նպատակ ունի որոշակի տեղեկատվություն փոխանցել անորոշ թվով անձանց և արվում է որոշակի ձևաչափով կազմակերպված միջոցառումների ժամանակ (օրինակ՝ գիտաժողովներ, համաժողովներ, հավաքներ, հանրահավաքներ և այլն), իսկ «փաստաթուղթ» տերմինի մեկնաբանությունն անհրաժեշտ է կատարել՝ հաշվի առնելով նաև երկրում գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կարգավորումը:

Վերոգրյալի առնչությամբ ցանկանում ենք ուշադրություն բևեռել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասին, ըստ որի՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Ինչպես կարելի է նկատել, 1087.1 հոդվածի 5-րդ մասը վերաբերում է այն դեպքերին, որոնք չեն համարվում զրպարտություն, իսկ նույն հոդվածի 6-րդ մասը՝ այն դեպքերին, որոնք թեպետև համարվում

<sup>17</sup> Տե՛ս E. Barendt, նշվ. աշխ., էջ 207:

են զրպարտություն, բայց հրապարակողն ազատվում է զրպարտության համար պատասխանատվությունից: Կարծում ենք՝ տվյալ տարանջատումն ունի մեկնաբանման կարիք: Նախ, քանի որ քաղաքացիական իրավունքում նույն իրավախախտումը կրկնելը որևէ իրավական հետևանք չի առաջացնում (առանց հաշվի առնելու դատարանի հայեցողությամբ պատասխանողի վրա ավելի մեծ փոխհատուցման չափ դնելու հնարավորությունը), ապա այդ տեսանկյունից նման տարանջատումը կարծես դառնում է իմաստագուրկ: Այսինքն՝ անկախ այն բանից՝ զրպարտության համար անձը կազատվի պատասխանատվությունից, թե նրա կատարած արարքը չի համարվի զրպարտություն, անձի համար կառաջանա նույն իրավական հետևանքը, այն է՝ չկրել պատասխանատվություն իրականությանը չհամապատասխանող և անձին արատավորող տվյալներ հրապարակելու համար: Բայց, մյուս կողմից, եթե զրպարտության համար պատասխանատվությունը մեկնաբանենք որպես դրամային փոխհատուցում, ինչպես նաև որպես հերքում կամ պատասխանի հրապարակում զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողի համար<sup>18</sup>, ապա կստացվի, որ «ազատել պատասխանատվությունից» ասելով պետք է հասկանալ ազատում փոխհատուցում կամ հերքում (պատասխանի) կատարելուց: Իսկ այն պարագայում, երբ արարքը առհասարակ զրպարտություն չի համարվում, կարող է խոսք լինել թերևս միայն հերքման (պատասխանի) հրապարակման մասին, քանի որ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը: Այսինքն՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման համար «զրպարտություն» կատարած լինելը պարտադիր պայման չէ: Այստեղ հարցի քննարկման հետագա ընթացքը կախված է հետևյալ հանգամանքից. եթե զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողի համար հերքումը դիտարկենք որպես պատասխանատվության միջոց, ապա կարող ենք փաստել, որ վերոնշյալ երկու դեպքերում էլ իրավական հետևանքը նույնն է՝ իրավունք ունենալ չհերքելու հրապարակածը: Սակայն եթե հերքումը դիտենք որպես պաշտպանության միջոց, ապա զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողի համար արդեն կառաջանա այլ իրավական հետևանք, մասնավոր-

<sup>18</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Ա. Չիֆլիկյան**, Անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի արատավորումն ու նսեմացումը զանգվածային լրատվության միջոցներով, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 1(3), Եր., 2019, էջ 145-147:

րապես՝ նրա վրա կարող է դրվել հերքման պարտականություն, չնայած արարքի՝ գրպարտություն չհամարվելու հանգամանքին:

Վերոգրյալին հավելենք ևս մեկ դիտարկում. 1087. 1 հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում խոսվում է ելույթի կամ փաստաթղթի՝ որպես տեղեկատվության աղբյուր լինելու դեպքում այն հրապարակողի գրպարտության համար պատասխանատվությունը բացառելու կարգավորման մասին: Մի դեպքում նշվում է «ելույթի», մեկ այլ դեպքում՝ «հրապարակային ելույթի» մասին, սակայն հասկանալի է, որ հրապարակայնությունը ելույթի անհրաժեշտ պայման է<sup>19</sup>, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման համաձայն: Կամ՝ 5-րդ մասում խոսվում է «փաստաթղթի» մասին, իսկ 6-րդում՝ «պաշտոնական փաստաթղթի» մասին, և այս դեպքում էլ կարելի է ենթադրել, որ եթե փաստաթուղթը նշվում է որպես տեղեկատվության աղբյուր, ապա այն պետք է լինի առնվազն թույլատրելի հրապարակող սուբյեկտի համար: Բացի այդ, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի համաձայն՝ փաստաթուղթը սահմանվում է որպես «պաշտոնական գրություն...»<sup>20</sup>: Ուստի կարծում ենք՝ «ելույթ և հրապարակային ելույթ», «փաստաթուղթ և հրապարակային փաստաթուղթ» կատեգորիաները համապատասխան իրավանորմերի կիրառման ժամանակ պետք է մեկնաբանվեն նույնական:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ

1) 1087.1 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, համաձայն որի՝ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում գրպարտություն, եթե դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում, չպետք է վերաբերի այն դեպքերին, երբ արատավորող բնույթի և իրականությանը չհամապատասխանող տվյալներ են հայտնվում երրորդ անձի մասին:

2) ՀՀ օրենսդրի կողմից ըստ էության նախատեսվել են խոսքի ազատության ու հեղինակության իրավունքի միջև հավասարակշռմանն ուղղված կարգավորումներ: Այսինքն՝ քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը գլխավորապես պաշտպանում է հեղինակության իրավունքը, դրա 4-րդ մասը և 5-րդ մասի 2-րդ կետն ուղղված են խոսքի ազատության պաշտպանությանը: Մասնավորապես՝ 1087.1 հոդվածի 4-րդ մասում որդեգրվել է անգլոամերիկյան մոտեցումը, բայց պետք է նկատի ունենալ, որ ամերիկյան իրավունքում դիֆամացիայի կապակացությամբ հարաբերություններում ապացուցման պարտա-

<sup>19</sup> Տե՛ս Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Եր., 1976, էջ 337:

<sup>20</sup> Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. չորրորդ, Հայկական ՄՄՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1980, էջ 639:

կանության փոխանցումը կատարվում է՝ հայցվորի հանրային սուբյեկտ լինելու հանգամանքով պայմանավորված, իսկ անգլիական իրավունքը տվյալ հարցում ապացուցման պարտականության փոխանցմամբ որդեգրել է պատասխանողի առաջարկը չընդունած հայցվորին «անհարմարություն պատճառելու» սկզբունքը: Բսկ 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում իրեն զգացնել է տալիս անգլիական իրավունքին հայտնի «ողջամիտ հրապարակում»-ը, որը վերաբերում է միայն զանգվածային լրատվամիջոցներին: Այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդիրը նախատեսել է նման վերապահում, կարծում ենք պետք է զնահատել դրական: Ըստ էության, այս առումով հայրենական օրենսդիրը նույնիսկ ավելի է ընդլայնել խոսքի ազատության սահմանները, քանի որ «ողջամիտ հրապարակման» միջոցը սահմանել է նաև այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար՝ մեկ դրույթում ներառելով «ողջամիտ հրապարակման», «ազնիվ մեկնաբանության» կառուցակարգերը և ավելին՝ զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող անձ չհանդիսացող իրավաբանական անձանց պաշտպանության կառուցակարգ, ինչը մի կողմից դյուրին է դարձնում տվյալ վերապահման իրավական կարգավորումը, բայց մյուս կողմից՝ էապես զսպում է զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող անձ չհանդիսացող սուբյեկտների՝ նշված վերապահումից օգտվելու հնարավորությունները, քանի որ չլինելով տեղեկատվության պրոֆեսիոնալ մատակարար, որպիսին զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող սուբյեկտներն են, մյուս անձինք բավական դժվարությամբ կկարողանան կամ գրեթե չեն կարողանա ապացուցել բոլոր այն պայմանները, որոնք ապացուցելու պահանջը մեծ դժվարությամբ են կատարում նույնիսկ զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողները:

**Բանալի բառեր** – գրպարտություն, անգլոամերիկյան իրավունք, ապացուցման բեռի փոխանցում, հանրային գերակա շահ, պատասխանատվությունից ազատում

**АРМЕНИИ ЧИФЛИКЯН – Загадка статьи 1087.1 Гражданского кодекса РА.** – Ставится вопрос об источниках некоторых положений статьи 1087.1 и её значение. В основном разбирается 5-я часть данной статьи с её тремя пунктами. Также рассмотрены 4-я и 6-я части статьи.

Отмечено, что создаётся впечатление, будто 2-й пункт 5-й части заимствован из англо-американского права. В частности, части 4-я и 5-я названной статьи защищают интересы клеветника, гарантируя тем самым осуществление права на свободу слова. Подробно проанализирован пункт 2-й части 5-й и сделан вывод о том, что он относится к случаям клеветнической информации, которая не носит преднамеренного характера, но преследовала цель послужить общественным интересам. Подчёркнуто, что разумный подход позволяет субъекту не нести негативных последствий, обусловленных клеветой. При этом автор интерпретирует, что значит «добросовестно и взвешенно излагать факты», анализирует особенности данных, не являющихся клеветой.

той, и обстоятельства, рассматриваемые в ходе досудебного и судебного разбирательства.

Внимание уделено также положениям о передаче бремени доказывания, предусмотренной частью четвёртой 1087.1 статьи, разобраны особенности их применения в делах о диффамации в английском и американском праве. Кроме того, проанализирована взаимосвязь частей 5-й и 6-й статьи, а также проведены параллели между аналогичными категориями в них.

**Ключевые слова:** клевета, англо-американское право, передача бремени доказывания, приоритетный общественный интерес, освобождение от ответственности

**ARMENUHI CHIFLIKYAN - *The Conundrum of the Article 1087.1 of the Civil Code.*** – This study aims to identify the sources and the meaning of certain provisions of article 1087.1. Basically, it is about the 5<sup>th</sup> section of this article with its three points. The 4<sup>th</sup> and the 6<sup>th</sup> sections of this article were also discussed.

As a result of the study, it was emphasized that especially the 2<sup>nd</sup> paragraph of the 5<sup>th</sup> section of the article under discussion look borrowed from common law. In particular, the author pointed out that sections 4 and 5 of article 1087.1 are aimed at protecting the interests of the slanderer, thereby guaranteeing the possibility of wider exercise of the right to freedom of speech. Paragraph 2 of section 5 was analyzed in detail, and it was concluded that it refers to the cases of publication of derogatory data that was not made intentionally, but at the same time was intended to serve the Supreme public interest. It was emphasized that reasonable publication allows a person not to bear the negative consequences associated with defamation. In addition, the author's interpretation of the phrase «conscientiously and carefully present the facts» is given. The author also analyzed the particulars of the presentation of information, which does not constitute libel, about the circumstances of the case by the participant during pre-trial and trial proceedings.

Attention was paid to the provision on the burden of proof transfer provided for in section 4 of article 1087.1, showing the subtleties of its application in defamation cases in English law, when the purpose of such transfer is punishing the offender, and in American law, when the victim must be a public person.

In addition, the issues of interrelation of sections 5 and 6 of article 1087.1 are analyzed, and parallels are drawn between similar categories provided for in paragraph 3 of section 5 and 6<sup>th</sup> section.

**Key words:** libel, Anglo-American law, transfer of the burden of proof, prevailing public interest, exemption from liability

Ներկայացվել է՝ 03.11.2020,  
Գրախոսվել է՝ 10.11.2020,  
Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020